# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

**«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գևորգյանը, Գ. Մեհրաբյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Գնանշման հարման առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Ա. Խաչիկյան)

1.1 Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.

-օրը՝ 13.05.2019թ.

-ժամը՝ 11:00

1.2 Ընդունել ի գիտություն, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

1.3 Ընդունել ի գիտություն, որ որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ի |

1.4 Ընդունել ի գիտություն, որ «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն

հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, այն է՝ Հավելված 3-ով մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 1-ին չափաբաժնի համար ներկայացված մեքենայի (երաշխիք, ամիս/կմ 12/65000) և մանիպուլյատորի երաշխիքային ժամկետը (մանիպուլյատորի երաշխիք, ամիս/աշխ.ժամ 12/750) և 2-րդ չափաբաժնի համար ներկայացված մեքենայի (երաշխիք, ամիս/կմ 12/65000) և մանիպուլյատորի երաշխիքային ժամկետները (մանիպուլյատորի երաշխիք, ամիս/աշխ.ժամ 12/750) և մեքենայի ընդհանուր քաշը (մեքենայի ընդհանուր քաշը, կգ. 25200) չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 23-րդ կետով՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյան _____

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գևորգյան _____

Գ. Մեհրաբյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան _____